

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 39/5

9 հոկտեմբերի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Լիլիթ Ադամյանի 20.09.2012թ-ի դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ 07.09.2012թ. թիվ 2111238 ստուգման ակտի և 03.09.2012թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1306 արձանագրության դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի 16.08.2012թ. թիվ 2111238 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Լիլիթ Ադամյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամակազմի մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 20.07.2004թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 07.09.2012թ-ին կազմվել է թիվ 2111238 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Վ.Գևորգյանի, հարկային տեսուչ՝ Ա.Խաչատրյանի կողմից 31.08.2012թ. ժամը 16:40-ին Ա/Ձ Լիլիթ Ադամյանին պատկանող ք.Գյումրի, Սայաթ-Նովա 2ա հասցեում գտնվող սպասարկման կետում կատարվեց հսկիչ գնում 3500 դրամի չափով, արվեց 1 հատ անձնագրի թարգմանություն 3500 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ-ի կողմից 3500 դրամ գումարը չմուծագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 16:41-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն՝ 17500 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 3500 դրամը, ժամը 16:55-ին մուծագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 16:56-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 10500 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում տնտեսվարող սուբյեկտին «սկիչ-դրամարկազմի մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Լիլիթ Ադամյանի գանգատում մասնավորապես նշված է.

2012թ. օգոստոսի 31-ին ժամը մոտավորապես 15:50-ից 16:00-ի սահմաններում Գյումրու ՏՀՏ տեսուչ Արտյոմ Խաչատրյանը եկել է Սայաթ-Նովա 2ա հասցեում գործող ա/ձ Լիլիթ Ադամյանի սպասարկման կետ, անձնագրի թարգմանությունը ստանալու /անձնագիրը հանձնվել էր թարգմանության նույն օրը առավոտյան/: Ա/Ձ Լիլիթ Ադամյանի գործավար Արմինե Հովհաննիսյանը հայտնել է, որ Լիլիթը աշխատանքի բերումով գտնվում է Գյումրու նոտարական գրասենյակում, կվերադառնա 30-40 րոպեից, պետք է սպասի Լիլիթի վերադարձին, քանի որ ինքը չունի իրավասություն որևէ փաստաթուղթ դուրս տալու: Արտյոմ Խաչատրյանը խաբեության և համոզելու միջոցով, թե իրեն շատ շտապ է պետք անձնագրի թարգմանությունը, և ասելով, թե Լիլիթը տեղակ է, վերցրել է անձնագրի թարգմանությունը: Որից հետո 3500 դրամ գումար դնելով սեղանին ասել է, որ «այս գումարի մասին էլ է Լիլիթը տեղակ, խնդրում եմ փոխանցել Լիլիթին»: Այնուհետ դուրս է եկել: Հարկ եմ համարում նշել որ Արմինե Հովհաննիսյանը չի հանդիսանում ա/ձ Լիլիթ Ադամյանի ապրանքներ վաճառող /ծառայություն մատուցող / և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատող, որի մասին հարկային տեսուչ Արտյոմ Խաչատրյանը քաջատեղյակ էր: Իր անօրինական գործողություններն ավարտելուց հետո դուրս է եկել և 30-ից 40 րոպե հետո մեկ այլ տեսուչի՝ Վարդան Գևորգյանի հետ վերադարձել է, ներկայանալով որպես հարկային տեսուչներ (առանց վկայականներ ցույց տալու): Քանի որ նշված ժամանակ ես գտնվել եմ Գյումրու նոտարական գրասենյակում, նստել և սպասել եմ իմ վերադարձին: Ժամը 16:35-ի սահմաններում վերադարձել եմ իմ աշխատավայր և իմ հարցին, թե ինչն է իրենց այցի նպատակը, հարկային տեսուչները ասացին, թե իբր ես նրանց չեմ տրամադրել ՀԴՄ կտրոն: Այն հարցին, թե ինչ գումարի մասին է խոսքը տեսուչները ցույց տվեցին սեղանին դրված գումարը: Իմ հաջորդ հարցին, թե իմ բացակայության ժամանակ ես ինչպես կարող էի ձեզանից գումար ստանալ և կտրոն տրամադրել, տեսուչները չպատասխանեցին: Այնուհետև ներկայացնելով հանձնարարագիրը պահանջեցին ՀԴՄ-ից դուրս բերել <Z> հաշվետվություն: Իմ

կողմից դուրս բերվեց <Z> հաշվետվություն 17500 դրամ ընդհանուր գումարով: Այնուհետ տեսուչների պահանջով, սեղանին վրա դրված գումարը մուտքագրեցի <ԴՄ և կտրոնը տվեցի Ա.Խաչատրյանին: Որոշ ժամանակ անց նորից պահանջեցին հանել <Z> հաշվետվություն: Կատարելով նրանց պահանջը նորից դուրս բերեցի <Z> հաշվետվությունը այս անգամ 10500 դրամ գումարով:

Համաձայն ակտի, իմ մոտ կատարվել է հսկիչ գնում, ուստի նշված գործողություններից հետո տեսուչները պարտավոր էին << կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշուման համաձայն հետ վերադարձնել գնմամբ ձեռք բերված ապրանքը /ծառայությունը/ <ԴՄ-ի գնման չեկի հիման վրա կազմեին հետ վերադարձման ակտ և պահանջեին վերադարձնել գումարը, տպելով վերադարձման կտրոն, սակայն նշված գործողությունները չեն կատարվել: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ավագ տեսուչ Վարդան Գևորգյանը վերցնելով <Z> հաշվետվությունները /թվով 2 հատ/ չի կազմել արձանագրություն, մինչ օրս չի վերադարձրել դրանք կամ դրանց կնիքված կրկնօրինակները, որը պարտավոր էր անել համաձայն <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 7-րդ հոդվածի <զ> կետի:

Ծանոթանալով հանձնարարագրի հետ ես հայտնաբերեցի, որ թիվ 2111238 հանձնարարագրում առկա են օրենսդրական բացթողումներ և գրավոր կազմեցի ինձ մոտ կասկած առաջացրած հարցերը, ակնկալելով ստանալ տեսուչներից դրանց գրավոր պատասխանները, այն է՝

- համաձայն <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի հավելված 2-ի 1.4 կետի, հսկիչ գնումն իրականացնելու վերաբերյալ հանձնարարագիրը պետք է վավերացված լինի հարկային մարմնի կնիքով: Ինձ ներկայացված հանձնարարագրի վրա բացակայում էր տեսչության կնիքը:

- համաձայն թիվ 2111238 հանձնարարագրի, ստուգվող ժամանակաշրջանի սկիզբը նշված է 20.07.2004թ.: Հաշվի առնելով, որ <ԴՄ-ն գործարկվել է 10.11.2010թ-ին, ինձ համար պարզ չէր, թե նշված ժամանակաշրջանից առաջ ինչ պետք է ստուգվեր նշված հանձնարարագրով:

- հանձնարարագիրը բացվել է 16.08.2012թ., որի մեջ ստուգման ժամկետ նշված է 10 աշխատանքային օր: Հանձնարարագրում չկա ստուգումը փաստացի սկսելու վերաբերյալ նշում, հետևապես համաձայն <Իրավական ակտերի մասին>> << օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի, ստուգումը պետք է սկսվեր 16.08.2012թ. և ավարտվեր 10 աշխատանքային օր անց, այսինքն՝ 29.08.2012թ-ին, այլ ոչ թե 31.08.2012թ.: Փաստորեն խախտվել է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետը:

Նշված հարցերի պարզաբանում ստանալու ակնկալիքով ես խնդրեցի գրավոր պատասխանել ինձ մոտ կասկած հարուցող վերոհիշյալ հարցերին, սակայն հարկային տեսուչները հրաժարվեցին գրավոր պատասխանել իմ հարցումներին:

Հանձնարարագիրը ստորագրելուց հրաժարվելու մասին խոսք չի եղել և միտք էլ չունեի, քանի որ փաստացի արդեն իրականացվել էր ստուգումը: Պարզապես եղել է առաջարկ ներկայացնել հանձնարարագիր վավերացված հարկային մարմնի կնիքով և ստուգումը փաստացի սկսելու վերաբերյալ նշումով: Այնուհետ փոստով ստացել եմ 31.08.2012թ-ին կազմված թիվ 2111238 ակտի նախագիծը, նույն օրը կազմված <Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կողմից ստուգման հանձնարարագիրը ստանալուց հրաժարվելու մասին>> արձանագրության և 03.09.2012թ-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1306 արձանագրության կրկնօրինակները:

Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1306 արձանագրությունը կազմվել է օրենքի պահանջներն անտեսելով: Մասնավորապես, 31.08.2012թ. կատարված վարչական իրավախախտման վերաբերյալ ակտը կազմվել է 03.09.2012թ., այն էլ ոչ իրավախախտման վայրում: Եթե տեսուչները գտնում էին որ ես խոչընդոտում եմ իրենց, ապա ինչու տեղում չկազմվեց << կառավարության 29.07.2010թ. թիվ 972-Ն որոշմամբ սահմանված կարգով <<արկ վճարողի խոչընդոտող գործողությունների մասին>> արձանագրությունը:

Ստուգման ընթացքում իմ կողմից ստեղծվել են բոլոր պայմանները ստուգումն իրականացնելու համար:

11.09.2012թ. օրենքով ինձ հատկացված ժամկետի սահմաններում << ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետին ներկայացրի իմ առարկություններն ակտի նախագծի վերաբերյալ: Նույն օրը փոստի միջոցով ինձ է հանձնվում 07.09.2012թ-ին կազմված թիվ 2111238 ակտի /ակտը կնիքված չէ/ և թիվ 2111238 հանձնարարագրի /հանձնարարագիրը արդեն կնիքված/ օրինակները:

Ստուգման ակտի համաձայն ստուգող անձանց կողմից կատարվել է հսկիչ գնում, այն ղեկավարում, երբ << ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի թիվ 2111238 հանձնարարագրով հանձնարարվել է կատարել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: <ԴՄ-ի կիրառման ճշտության

ստուգում հարցադրումն իրենից չի ենթադրում ՀԴՄ-ի կիրառման հսկողության ստուգում, դա կարգավորվում է <ՀԴՄ-ի կիրառման մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետով:

Ակտում սխալ է նշված նաև այն իրավական նորմը, որի պահանջները իբր չեն կատարվել: Մասնավորապես, համաձայն ակտի, խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները: Եթե նույնիսկ ընդունենք, որ <խախտում> է կատարվել, ապա այն պետք է որակվեր հիշատակված կանոնների 19-րդ կետի <գ> ենթակետով, քանի որ իմ կողմից ծառայություն է մատուցվել:

Միաժամանակ ստուգման ակտը կազմվել է <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, ակտի նախագիծը կազմվել է 31.08.2012թ-ին, այն մուտք է եղել փոստային բաժանմունք 03.09.2012թ-ին և ելք է եղել 05.09.2012թ-ին, այսինքն՝ ըստ փոստային կնիքի ինձ է հանձնվել 05.09.2012թ-ին: Այսինքն, 5 աշխատանքային օրվա հաշվարկով, ես ակտի նախագծի վերաբերյալ իմ առարկությունները կարող էի ներկայացնել մինչև 13.09.2012թ-ը: 11.09.2012թ-ին իմ առարկությունները ակտի նախագծի վերաբերյալ մուտքագրվել է փոստային բաժանմունք: Նույն օրը փոստի առաքիչն ինձ է հանձնում ստուգման ակտը, որի վրա կազմման ամսաթիվ նշված է 07.09.2012թ, այսինքն՝ ակտը 5 աշխատանքային օրվա փոխարեն կազմվել է 2 աշխատանքային օր հետո, որով կրկին անգամ խախտվել է օրենքով սահմանված իմ իրավունքները:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Լիլիթ Ադամյանը խնդրում է քննարկել ներկայացված առարկությունները և չեղյալ համարել Գյումրու ՏՀՏ 07.09.2012թ-ին կազմած թիվ 2111238 ստուգման ակտը և վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1306 արձանագրությունը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Լիլիթ Ադամյանի լիազոր ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն, ակտում նշվում են ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:

Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտում ըստ էության սխալ է նշված իրավական այն նորմը, որի պահանջները չեն կատարվել: Մասնավորապես, ստուգման ակտով արձանագրվել է, որ Ա/Ձ Լիլիթ Ադամյանին պատկանող ք.Գյումրի, Սայաթ-Նովա 2ա հասցեում գտնվող սպասարկման կետում կատարվել է անձնագրի թարգմանություն, որի դիմաց վճարված 3500 դրամը չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել կտրոն: Այսինքն, Ա/Ձ Լիլիթ Ադամյանի կողմից մատուցվել է ծառայություն: Հետևապես, ստուգման ակտում որպես իրավական նորմ, որի պահանջները չեն կատարվել, ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված <Սկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ>-ի 19-րդ կետի <բ> ենթակետի փոխարեն պետք է նշվեր նույն կետի <գ> ենթակետը:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ ստուգման ակտը կազմվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Քննարկվող դեպքում ստուգման ակտի նախագիծը կազմվել է 31.08.2012թ-ին, որը Ա/Ձ Լիլիթ Ադամյանին է առաքվել փոստային ծառայության միջոցով 03.09.2012թ-ին: Որից հետո 07.09.2012թ-ին կազմվել է ստուգման ակտը:

Եթե նույնիսկ ընդունենք, որ ակտի նախագիծը Ա/Ձ Լիլիթ Ադամյանին է ներկայացվել փոստային առաքման օրը՝ 03.09.2012թ-ին, ապա այս պարագայում անգամ չի պահպանվել օրենքով սահմանված 5 աշխատանքային օրվա պահանջը:

Վերոգրյալից հետևում է, որ խախտվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը, այն է՝ ստուգման ակտը կազմվել է մինչև 5 աշխատանքային օրը լրանալը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ստուգման ակտն արձանագրեց, որ այն չի բավարարում << օրենսդրությամբ վարչական ակտին ներկայացվող պահանջներին: Մասնավորապես, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> << օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի <ժ> կետի համաձայն. <Վարչական ակտը պետք է պարունակի ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը>:

Տվյալ դեպքում գանգատին կից ներկայացված ստուգման ակտի օրինակը կնքված չէ ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքով:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> << օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:


Ինչ վերաբերվում է 03.09.2012թ-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1306 արձանագրությանը, որի համաձայն Ա/Ձ Լիլիթ Ադամյանը չի կատարել ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց պահանջները, որով և խոչընդոտել վերջիններիս գործողություններին, ապա գանգատի քննարկման ընթացքում չներկայացվեցին բավարար ապացույցներ, որոնք կհիմնավորեին Ա/Ձ Լիլիթ Ադամյանի կողմից ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց գործողություններին խոչընդոտելու հանգամանքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին>> << օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել << ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ 07.09.2012թ. թիվ 2111238 ստուգման ակտը և 03.09.2012թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1306 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ